խանի ասէ. Այժմ քո տեսեալ զիս անձամբս փոքրիկ[1], ոչ առեր զչափ մեծութեան իմոյ. զի ցայժմ ես քեզ առեւծ էի, եւ արդ աղուէս. Բայց մինչ ես Վասակն էի, ես[2] սկայ էի մի ոտնս ի մերոյ լերին կայր, եւ միւս ոտնս իմ ի միոյ լերին կայր[3]. յորժամ յաջ ոտնս յենուի, զաջ լեառն ընդ գետին տանէի. յորժամ ի ձախ ոտնն յենուի, զձախ լեառն ընդ գետին տանէի: *41* Ապա հարցանէր թագաւորն Պարսից Շապուհ եւ ասէ. Աղէ՝ տուր ինձ գիտել, ո՞վ են լերինքն այնոքիկ՝ զորս դուն ընդ ունջ տանէիր: *42* Եւ ասէ Վասակ. Լերինքն երկուք, մի դու էիր, եւ մի թագաւորն Յունաց: *43* Այն մինչ տուեալ էր ինձ Աստուծոյ, զքեզ ընդ գետին տանէի եւ զթագաւորն Յունաց, մինչեւ աւրհնութիւն հաւրն մերոյ Ներսէսի հանգուցեալ էր ի վերայ մեր, եւ Աստուծոյ զմեզ ի ձեռանէ չէր թողեալ. մինչեւ զնորա բանն արարաք, եւ խրատ նորա եկաց առ մեզ, գիտացաք տալ քեզ խրատ, մինչեւ մեզէն աչաւք բացաւք անկաք ի խորխորատ[4]: *44* Արդ զինչ եւ կամիս՝ արա: *45* Ապա ետ հրաման թագաւորն Պարսից մորթել զզաւրավարն Հայոց Վասակ, եւ զմորթն հանել եւ լնուլ խոտով, եւ տանել ընդ նոյն բերդ յԱնդմըշն՝ որ Անյուշն կոչեն, ուր արգելին իսկ զթագաւորն Արշակ:

ԳԼՈՒԽ ԾԵ.

1 Յաղագս գերութեանն եւ հարուածոյն աշխարհին Հայոց եւ աւերածոյն, եւ գերութեան տանելոյն ի Պարս, եւ չարամահ լինելոյ տիկնոջն Փառանձեմայ, եւ քաղաքացն Հայոց աւերելոյ, եւ հիմանց աշխարհին տապալելոյ:

*2* Ապա արձակեաց արքայն Պարսից Շապուհ ի վերայ աշխարհին Հայոց երկուս ոմանս յիշխանաց անտի իւրոց, միումն Զիկ անուն եւ միումն Կարէն, հինգ հարիւր բիւրով, զի եկեսցեն բրեսցեն քանդեսցեն զաշխարհն Հայոց: *3* Եւ եկին հասին ի վերայ երկրին Հայոց: *4* Ապա իբրեւ ետես տիկին աշխարհին Հայոց կինն Արշակայ թագաւորին Հայոց Փառանձեմ զզաւրս թագաւորին Պարսից, եթէ եկին լցին զաշխարհս Հայոց, առեալ ընդ իւր մարդիկ իբրեւ մետասան հազար ազատս ընտիրս սպառազէնս պատերազմողս, եւ հանդերձ նոքաւք դիմեաց եմուտ ի բերդն Արտագերից՝ որ ի յերկրին Արշարունեաց[5]՝ յերեսաց զաւրացն Պարսից: *5* Ապա եկին հասին ամենայն զաւրքն Պարսից, շուրջ զբերդաւն նստէին, պահ արկանէին. պատեցին պա-

1 *Օրինակ մի յաւելու՝* եւ սուրն իմ ոչ է ընդ իս

2 *Օրինակ մի՝* ձեզ

3 *Օրինակ մի՝* մի ոտս ի մի լերին կայր, եւ միւսն այլ լերին

4 *Յօրինակի միում՝* չէր թողեալ. եւ մեզ բարի խրատ ետ սիրել զմիմեանս, եւ հնազանդ լինել տերանց եւ թագաւորացն մերոց. անլուր եղեալ յայտնապէս մեզէն աչօք բացօք եւ խստասրտութեան մերոյ անկաք ի խորխորատ

5 *Յօր.* Արշակունեաց *տե՛ս գլ. ԺԹ*